



CCJE(2020)2

Ստրասբուրգ, 2020 թվականի նոյեմբերի 6

## Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ (CCJE)

### ԵԴԽԽ կարծիք թիվ 23 (2020)

#### Դատավորների միությունների դերը դատական իշխանության անկախությանն աջակցելու գործում

#### I. Ներածություն

1. Նախարարների կոմիտեի կողմից իրեն վերապահված իրավասության շրջանակում Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽԽ) որոշեց կարծիք հայտնել դատավորների անկախության ապահովման առթիվ դատավորների միությունների դերի վերաբերյալ:
2. Սույն կարծիքը կազմվել է ԵԴԽԽ նախկին կարծիքների, ԵԴԽԽ դատավորների Մազնա Կարտայի (2010) և Եվրոպայի խորհրդի համապատասխան փաստաթղթերի, մասնավորապես՝ «Դատավորների կարգավիճակի մասին» Եվրոպական խարտիայի (1998 թ.) և «Դատավորների անկախության արդյունավետության և պատասխանատվության մասին» Նախարարների կոմիտեի CM/Rec (2010)12 առաջարկության՝ անկախություն, արդյունավետություն և պատասխանատվություն ու Եվրոպայում հասարակական կազմակերպությունների իրավական կար-

գավիճակի վերաբերյալ CM/Rec (2007)14 առաջարկության հիման վրա, դատավորների արտահայտվելու ազատության հետ կապված (CDL-AD(2015)18), ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի և Ժողովրդական ինստիտուտների ու մարդու իրավունքների ԵԱՀԿ գրասենյակի (OSCE/ODIHR) կողմից ընդունված միավորման ազատության ընդհանուր ուղեցույցների հիման վրա: Այն հաշվի է առել նաև դատական իշխանության անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները, դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքները, Դատավորների միջազգային միության դատավորի մասին համընդհանուր կանոնադրությունը, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի 2012 թվականի մայիսի 21-ի (A/HRC/20/27) առաջին հաշվետվությունը՝ կապված խաղաղ հավաքների և միավորման ազատության իրավունքների հետ, ինչպես նաև ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի՝ դատավորների և իրավաբանների անկախության վերաբերյալ 2019 թվականի հունիսի 24-ի երրորդ հաշվետվությունը, որն առնչվում է դատավորների և դատախազների կողմից ազատ արտահայտման, միավորման և խաղաղ հավաքների իրականացման հետ:

- 3. Կարծիքը հաշվի է առնում նաև դատարանների անկախությանը սատարելու հարցում դատավորների միությունների դերի վերաբերյալ հարցաշարին ԵԴԽԽ անդամների պատասխանները, այդ պատասխանների ամփոփումը, ինչպես նաև ԵԽ-ի կողմից նշանակված փորձագետի՝ դատավոր Ջերարդ Ռեյզների նախնական նախագիծը<sup>1</sup>:

**II. Կարծիքի շրջանակը**

- 4. Հարցաշարին պատասխանած 35 անդամ-պետություններից 12-ում գոյություն ունի դատավորների միայն մեկ միություն: Այդ անդամ-պետությունների մեծ մասում գործում են դատավորների մեկից ավելի միություններ:
- 5. Անդամ-պետություններում իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առկա են բազմազան դատավորների միություններ: Դրանց անդամակցության պայմանները տարբեր են, տարբեր են նաև դրանց նպատակները, մշտապես տարբեր են դրանց ծավալները և ներկայացուցչությունները:
- 6. Որոշ միություններ բաց են միայն որոշակի ատյանի դատավորների համար. օրինակ, Գերագույն դատարանի դատավորները երբեմն ունեն իրենց առանձին միությունը: Որոշ միություններում ներառված են որոշակի մասնագիտացման դատավորներ: Այս տեսակի ամենատարածված միությունները Վարչական դատարանների դատավորների միություններն են: Կան նաև կին դատավորների միություն-

---

<sup>1</sup> Դատավոր Ռեյզները եղել է ԵԴԽԽ նախագահը 2012-2013 թվականներին, ինչպես նաև ԵԴԽԽ աշխատանքային խմբի վարչմի անդամը:

ներ<sup>2</sup>: Այնուամենայնիվ, հիմնականում միությունները թույլ են տալիս ներգրավվել բոլոր դատավորներին:

7. Բոլոր տեսակի միություններին անդամակցելը կամավոր է, ուստի միության ծավալը, ինչպես նաև անդամների թվաքանակը կարող են բավականաչափ տարբեր լինել, և ամենակարևորը՝ միության ներկայացուցչությունը, որը որոշվում է միության անդամ դատավորների թվի և այն դատավորների թվի հարաբերակցությամբ, որոնք կարող էին լինել այդ միության անդամ, էապես տարբեր է:
8. Դատավորների միություններն ունեն իրենց կազմակերպարարական ձևը՝ իրավաբանական անձը: Դրանց մեծ մասը ստեղծվում է հասարակական կազմակերպությունների մասին օրենքի վրա: Դրանք կարող են ստեղծվել նաև որպես դատավորների ոչ պաշտոնական խմբեր:
9. Բոլոր դատավորների միությունները տրամադրում են ցանց, հարթակ իրենց անդամների շփման և հարաբերությունների համար: Միությունների մեծ մասի նպատակն է նպաստել և պաշտպանել դատավորների անկախությունը և օրենքի գերակայությունը, ինչպես նաև երաշխավորել դատավորների կարգավիճակը և պատշաճ աշխատանքային պայմանները: Մյուս կարևոր նպատակներն են դատավորների վերապատրաստումների կազմակերպումը, դատավորների վարքագծի կանոնները, ինչպես նաև ներդրումը դատական և օրենսդրական բարեփոխումների ոլորտում:
10. Այս կարծիքի իմաստով դատավորների միություններն ինքնակառավարվող, ոչ առևտրային կազմակերպություններ են, որոնք հանդես են գալիս իրավաբանական անձի տեսքով կամ առանց դրա և միավորում են կամավորության հիմունքներով անդամակցող անդամներին:
11. Միությունների մեծ մասը բաց են դատավորների համար և շատ դեպքերում ներառում են նաև կենսաթոշակի անցած դատավորների: Տարբեր երկրների միություններում ապագա դատավորները և դատավորների օգնականները կարող են նույնպես դառնալ անդամ: Տարբեր երկրների միություններում, հատկապես եթե առկա է ընդհանուր ուսումնական ծրագիր դատավորների և դատախազների համար, դատախազները նույնպես կարող են դառնալ անդամ:

### **III. Միջազգային և եվրոպական համակարգեր**

12. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը<sup>3</sup>, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը (ICCPR)<sup>4</sup> և Մարդու իրավունքների և

---

<sup>2</sup> Կին դատավորների միությունների առկայության մասին հայտարարվել է Բոսնիա և Հերցեգովինայի, Իտալիայի, Սլովակիայի, Ուկրաինայի և Միացյալ Թագավորության կողմից:

հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (ECHR)<sup>5</sup> բուլղորի համար նախատեսում են միավորվելու իրավունք, որն իրենից ներկայացնում է միավորումներ ստեղծելու կամ դրանց միանալու իրավունք:

13. Բոլոր անհատները, այդ թվում՝ դատավորներն օգտվում են հիմնարար այս իրավունքներից, որոնք պաշտպանվում են վերը նշված փաստաթղթերով<sup>6</sup>: Խաղաղ միություններ ստեղծելու ազատության իրավունքն իրականացնելիս դատավորները պետք է նկատի ունենան իրենց պարտականությունները և խուսափեն այնպիսի իրավիճակներից, որոնք կարող են անհամատեղելի լինել իրենց պաշտոնի հետ կամ կասկածի տակ դնեն նրանց անկախությունն ու անկողմնակալությունը<sup>7</sup>:
14. Միավորվելու իրավունքը զուտ դատավորի անձական շահի շրջանակում չի դիտարկվում: Ինչ վերաբերում է դատավորներին, այս իրավունքը դատական իշխանության շահի ներքո է: Դատավորների միավորվելու իրավունքը հստակորեն սահմանված է ՄԱԿ-ի՝ դատական իշխանության<sup>8</sup> անկախության համընդհանուր սկզբունքներով և դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքներով<sup>9</sup>, ինչպես նաև դատավորների համընդհանուր խարտիայով<sup>10</sup>:
15. Եվրոպայում դատավորների միություն ձևավորելու իրավունքը հետագա զարգացում է ունեցել 1998 թվականին Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիայով<sup>11</sup> և Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ 12 (2010) առաջարկությամբ<sup>12</sup> և ԵԴԽԽ դատավորների «Magna Carta»-ով (Հիմնարար սկզբունքներ):<sup>13</sup> Եվրոպական խարտիան ընդգծում է դատավորների միությունների ներդրումն իրավունքների պաշտպանության գործում, որոնց հետ

<sup>3</sup> Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին, 20/1 հոդվածով:

<sup>4</sup> Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիրն ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 16.12.1966 թվականին:

<sup>5</sup> Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին (ECHR) (4.11.1950), 11/1 հոդված:

<sup>6</sup> Դատավորների մասնագիտական վարքագծի կանոնների, մասնավորապես՝ էթիկայի կանոնների, անհամատեղելի վարքագծի և կողմնակալության մասին ԵԴԽԽ կարծիք թիվ 3 (2002), կետ 27:

<sup>7</sup> Համեմատեք նաև դատավորների և իրավաբանների անկախության մասին ՄԱԿ-ի հատուկ հաշվետվության՝ կապված դատավորների և իրավաբանների արտահայտվելու, միավորվելու և խաղաղ հավաքների հետ, 2019 թվականի հունիսի 24, Առաջարկություն 107:

<sup>8</sup> Դատական իշխանության անկախության ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքներ (հաստատված Ընդհանուր ասամբլեայի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ին), կետ 9:

<sup>9</sup> Դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքներ, 4-6 կետեր:

<sup>10</sup> Դատավորների համընդհանուր խարտիա (ընդունված IAJ Դատավորների միջազգային միության կողմից 2017 թվականի նոյեմբերի 14-ին), հոդված 3/5:

<sup>11</sup> Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիա, սկզբունքներ 1.7 և 1.8:

<sup>12</sup> Առաջարկություն (2010) 12, կետ 25:

<sup>13</sup> ԵԴԽԽ դատավորների «Magna Carta»-ով (Հիմնարար սկզբունքներ) (17.11.2010) կետ 12:

առնչվում են դատավորներն իրենց կարգավիճակի բերումով: Առաջարկություն (2010) 12 վերահաստատում է այն և դատավորների կարգավիճակի կենտրոնական տարր է հռչակում անկախությունը, ինչպես նաև որպես լրացուցիչ խնդիր ավելացնում է օրենքի գերակայությանը նպաստելը: Դատավորների «Magna Carta»-ն անվանում է այս նպատակը «հասարակությունում դատական իշխանության առաքելության պաշտպանություն»: Նման զարգացումները խնդիրների ընդլայնման տեսանկյունից կարելի է նկատել նաև դատավորների միությունների նպատակները վերլուծելիս, որտեղ ներկայումս առավել դատավորների կարգավիճակին դարձվող ուշադրությունն ուղեկցվում է նաև օրենքի գերակայության նկատմամբ տեղեկացվածությանը:

#### IV. Դատավորների միությունների նպատակներն ու խնդիրները

16. Դատավորները ժողովրդավարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների հիման վրա ստեղծված պետությունների հիմնական անկյունաքարերն են<sup>14</sup>: Դա այս դերի տրամաբանական հետևանքն է, որ կանխորոշում են վերը նշված եվրոպական չափանիշ ստեղծող փաստաթղթերը, իսկ շատ դատավորների միությունների կանոնադրություններ, որպես հիմնական նպատակ, նախատեսում են 1. դատական իշխանության անկախության պաշտպանությունը, 2. օրենքի գերակայությանը նպաստելն ու բարեփոխումները: Նշված երկու նպատակներն էլ նպաստում են ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով նախատեսված անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի դատաքննության հիմնարար իրավունքի արդյունավետ իրականացմանը:
17. Անկախություն հաստատելու և պաշտպանելու դատավորների միությունների առաջին նպատակն այլ գործոնների շարքում ներառում է դատավորների պաշտպանություն անկախության նկատմամբ ցանկացած ոտնձգություններից՝ պահանջելով բավարար աղբյուրներ և բավարար աշխատանքային պայմաններ, որոնց նպատակն է արդյունավետ վարձատրությունն ու սոցիալական ապահովությունը՝ մերժելով քննադատություններն ու հարձակումները դատական իշխանության և անհատ դատավորների նկատմամբ՝ հաստատելով, նպաստելով և կիրառելով էթիկայի չափանիշներ և երաշխավորելով խտրականության բացառումը և գենդերային հավասարակշռությունը:
18. Դատավորների միությունների երկրորդ նպատակը, որն օրենքի գերակայությանը նպաստելն ու բարեփոխներն են, այլ գործոնների շարքում ներառում է վերապատ-

<sup>14</sup> Դատական իշխանության դերի առթիվ տես՝ ԵԴԽԽ կարծիք թիվ 18 (2015) Դատական իշխանության դերի և ժամանակակից ժողովրդավարությունում իշխանության այլ ճյուղերի հետ հարաբերությունների մասին:

րաստումների կազմակերպումը, գիտելիքների և փորձի փոխանակումն ու տարածումը՝ նպաստելով արդարադատության իրականացմանը՝ կապված նրանց հետ, որոնք պատասխանատու են դրա համար, նպաստելով դատական իշխանության բարեփոխումներին և իրավակիրառ պրակտիկային, նպաստելով ՁԼՄ-ների միջոցով դատավորների, դատական իշխանության և օրենքի գերակայության դերի արդյունավետ լուսաբանմանը:

19. Նշված նպատակները բացառապես դատավորների միությունների նպատակները չեն: Դատական համակարգի ներսում և դրանից դուրս մի շարք այլ մարմիններ ունեն իրենց ուրույն դերն այդ նպատակներին հասնելու գործում: Դրանց են նպաստում փոխադարձ հարգանքը, թափանցիկությունը և համագործակցությունը:
20. Դատավորների միությունները նաև կարող են նախաձեռնել հանդիպումներ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, որոնք կարող են արտացոլել հասարակության սպասումները դատական համակարգի և արդարադատության իրականացման նկատմամբ<sup>15</sup>:
21. Դատավորների միության ակնհայտ նպատակներից է դրա անդամների միջև կապի ստեղծումը: Այն միավորում է դատավորների, որոնք անհատապես են իրականացնում իրենց գործառույթները կամ գտնվում են դատավորների կոլեգիայի կազմում՝ այնուամենայնիվ ունենալով ընդհանուր շահեր և կարիքներ: Դատավորների միջև երկխոսության և քննադատության հնարավորության տրամադրումն օգնում է նպաստել ինքնաքննադատությանը և զարգացնում է ամուր արժեհամակարգի վրա հիմնված դատական համակարգ: Միասնությունը դատավորների միության շրջանակներում հանգեցնում է նրան, որ դատավորները փոխանակում են իրենց փորձը և գիտելիքները<sup>16</sup>: Դա առավել արդյունավետ է դառնում, երբ հավաքվում են տարբեր ատյանների և իրավասության դատարանների դատավորներ: Դատավորների միությունները կարող են նաև լինել այն վայրը, որտեղ հնարավոր է խորացնել մասնագիտացված դատավորների գիտելիքները և այդպիսով նպաստել օրենքի միատեսակ կիրառմանը: Եվ վերջապես, սակայն ոչ վերջին տեղում պետք է նշել, որ դատավորների միություններն օգնում են զարգացնել դատական

<sup>15</sup> CM/Rec (2010)12, կետ 20:

<sup>16</sup> Ինչպես, որ միևնույն դատարանում աշխատող դատավորների միջև փոխանակումների դեպքում է, քանի որ շատ անդամ-պետություններում նրանց հանդիպումները տեղի են ունենում «տարածելու նպատակով նախադեպերում առկա իրավական զարգացումները, ինչպես նաև մասնագիտական փորձը», տես՝ CEPEJ-ի հաշվետվությունը «Հրաժարվելով դատավորների մեկուսացումից» թեմայով ձեռնարկը, որի նպատակն է բարելավել դատավորների հմտությունները և իրավասությունը, նպաստելու գիտելիքներ կիսելուն և համագործակցությանն ու հրաժարվելու դատական մեկուսացման սովորությունից» (06.12.2019, CEPEJ (2019) 15, էջ 8):

իշխանության անկախության ընդհանուր ոգին, մարդու իրավունքները և օրենքի գերակայությունը:

22. Դատավորների միությունները հեշտացնում են արտասահմանյան համագործակցությունը և թույլ են տալիս իրականացնել փորձի փոխանակում այլ անդամ-պետությունների միությունների միջև: Նրանք համագործակցում են նաև եվրոպական մակարդակով մի շարք եվրոպական դատական միությունների և կազմակերպությունների շրջանակներում: Այս կերպ ազգային դատավորների միությունները հնարավորություն են ստեղծում իրենց անդամների համար իրականացնելու միջազգային փորձի փոխանակում և կարևոր դերակատարություն ունեն եվրոպական չափանիշները դատավորների շրջանակում տարածելու գործում:
23. Հիմնվելով դատավորների միությունների վերը նշված կարևոր ասպեկտների և անդամ-պետություններում դատական համակարգերի հիմնարար արժեքներին նպաստելու դրանց մեծ դերի վրա՝ ԵԴԽԽ-ն հույժ կարևոր է համարում, որպեսզի յուրաքանչյուր դատական համակարգ ունենա գոնե մեկ նմանատիպ դատավորների միություն:

**V. Ինչպես կարող են դատավորների միությունները հասնել իրենց նպատակների իրականացմանը**

**Ա. Դատական իշխանության ներքո**

24. Դատական իշխանության և առհասարակ դատավորների անկախությանը նպաստելու և այն պաշտպանելու համար դատավորների միությունները պետք է իրականացնեն բազմաձև գործունեություն: Անհատ դատավորի անկախությունը պահանջում է անկախ դատական համակարգի առկայություն<sup>17</sup>: Անկախությունը բացառում է ոչ միայն արտաքին, այլ նաև դատական համակարգի ներսում ազդեցությունը<sup>18</sup>: Դատավորների միությունները հաճախ կարող են առճակատվել սպառնալիքների, անարդար քննադատության և հարձակումների հետ: Սակայն առավել բարդ է գործ ունենալ ոչ պատշաճ ազդեցության հետ իրավասու մարմինների կողմից համապատասխան որոշումների ընդունելու տեսքով, որոնք ազդում են դատավորների կարիերայի վրա (նշանակման, առաջխաղացման, տեղափոխման, կարգապահական և գնահատման գործընթացներ և այլն) կամ բոլոր տեսակի որոշումներ ընդունելու տեսքով, որոնք առնչվում են դատարանի գործունեության կազմակերպման գործընթացներին:

<sup>17</sup> CM առաջարկություն (2010)12, կետ 4:

<sup>18</sup> ՄԻԵԴ որոշում «Պավլով-Տկալցիցն ընդդեմ Խորվաթիայի գործով», թիվ 24819/06, կետ 86, «Ագրո-կոմպլեքսներն ընդդեմ Ուկրաինայի գործով», թիվ 23465/03, կետ 137:

25. Նման որոշումների հետ գործ ունենալու իրավասություն ունեն դատական համակարգերի խորհուրդները, դատարանների գործունեության կազմակերպման մարմինները, դատարանների նախագահները և երբեմն նույնիսկ գործադիր մարմինները (կառավարությունը կամ Արդարադատության նախարարությունը): Ուստի իրենց նպատակներին հասնելու համար դատավորների միությունները պետք է կապի մեջ լինեն այդ մարմինների հետ:
26. Նմանօրինակ կապերը պետք է հիմնված լինեն թափանցիկության, փոխադարձ հարգանքի և միմյանց փաստարկները լսելու պատրաստակամության վրա: Դատավորների միությունները չպետք է միջամտեն ծառայողական առաջխաղացման հետ կապված հարցերին, սակայն դրանք կարող են վերահսկել, արդյոք իրավասու մարմիններն առաջնորդվում են պատշաճ գործընթացներով և կիրառում են ճիշտ չափանիշներ, թե ոչ:
27. Դատարանների գործունեության կազմակերպիչները պետք է տեղյակ լինեն, որ դատավորների միությունները ոչ միայն փոխանցում են իրենց անդամների դիրքորոշումը, այլ նաև ներկայանում են որպես իրենց անդամների փորձի փոխանակման գործիք: Հաճախ հենց պրակտիկ աշխատակիցներն են, որ ամենալավն են հասկանում, թե ինչ է պրակտիկորեն անհրաժեշտ: ԵԴԽԽ-ն առաջարկել է, որպեսզի դատավորները խորհրդատվությամբ հանդես գան դատարանի նախագահի մոտ<sup>19</sup>: Նման կերպով դատավորների միությունները պետք է կատարեն նման խորհրդատվական դեր դատարանների գործունեության ղեկավարների մոտ կամ բոլոր ատյանների դատական մարմինների ղեկավարների մոտ:
28. Հատկապես դատարանների գործունեության ղեկավարման մակարդակում, որը պատասխանատու է տարբեր որոշումների և կարգավորումների ընդունման համար, դատավորների միությունների ներգրավվածությունը մարտավարական որոշումների և կարևոր հարցերի ոլորտում կարող է լինել արդյունավետ և նպատակահարմար:
29. Անդամ-պետությունների մեծ մասում դատավորների առաջխաղացման հետ կապված որոշումները և/կամ դատարանների գործունեության ղեկավարումն իրականացնում են դատական իշխանության խորհուրդները<sup>20</sup>: Դրանց գլխավոր առաքելությունն է դատական համակարգի, ինչպես նաև անհատ դատավորի անկախության և օրենքի գերակայության երաշխավորումը<sup>21</sup>: Այդպիսով, դատական իշխանության խորհուրդների խնդիրները և դատավորների միությունների գլխավոր նպատակները համընկնում են: Շատ հաճախ կարող է լինել հայացքների համընկ-

<sup>19</sup> ԵԴԽԽ կարծիք թիվ 19 (2016)՝ Դատարանի նախագահի դերի վերաբերյալ, կետ 19:

<sup>20</sup> ԵԴԽԽ կարծիք թիվ 10 (2007) Դատական իշխանության խորհուրդի՝ հասարակությանը մատուցվող ծառայության վերաբերյալ, կետ 42:

<sup>21</sup> Ibid, paras 8ff and 41f:



նում, սակայն, այնուամենայնիվ, կարող է առաջ գալ դատավորների և դատական իշխանության խորհուրդների հայացքների տարբերություն, ի դեպ վերջինս ունի ինչպես դատավոր, այնպես էլ ոչ դատավոր անդամներ: Նման դեպքերում պետք է տեղի ունենա կարծիքների թափանցիկ փոխանակում:

30. Լավագույն պրակտիկայի որոնման արդյունքում ԵԴԽԽ-ն փաստում է, որ երկու անդամ-պետություններում<sup>22</sup> կան դատավորների և դատախազների խորհրդատվական խորհուրդներ, որտեղ «inter alia», ներգրավված են դատավորների և դատախազների միությունների ներկայացուցիչներ, որտեղ քննարկվում են նրանց մասնագիտական շահերին առնչվող հարցերը, ներառյալ՝ նրանց կարգավիճակի, աշխատանքային պայմանների, պարգևատրման և այլ նման հարցեր, պատրաստվում են համապատասխան օրինագծեր: ԵԴԽԽ-ն խրախուսում է նման նախաձեռնությունները:
31. ԵԴԽԽ-ն նկատել է, որ մի շարք անդամ-պետություններում դատավորների միությունն ունի որոշակի ազդեցություն դատական իշխանության խորհրդի անդամների ընտրության կամ թեկնածուների<sup>23</sup> վերաբերյալ կարծիք ներկայացնելու հարցում, այն թեկնածուներին պաշտպանելու ճանապարհով, որոնք ունեն իրենց<sup>24</sup> առաջարկող որոշակի թվով կոլեգիաների կարիք՝ դատավորներ<sup>25</sup> առաջադրելու ճանապարհով, կամ թեկնածուներ<sup>26</sup> առաջադրելու իրավական պարտականություն ունենալու ճանապարհով, կամ ընտրությունների<sup>27</sup> հետ կապված օրենքով սահմանված կարգով ձևական դերակատարություն ունենալու ճանապարհով, կամ էլ նույնիսկ ինքնուրույն անդամներ ընտրելու ճանապարհով:<sup>28</sup>
32. Դատական իշխանության խորհրդի աշխատանքին ուղղված ոտնձգության բացակայության պարագայում վերջինիս անդամների ընտրությանը նման մասնակցությունը ողջունելի է: Այնուամենայնիվ, պետք է ուշադիր լինել, որպեսզի նման համակարգը չհանգեցնի ընտրությունների և խորհրդի հետագա աշխատանքի քաղաքականացվածությանը: Ցանկացած դեպքում պետք է բացառել որևէ խտրականության դրսևորում, իսկ դատավորների միության անդամներն անխոչընդոտ պետք է կարողանան դառնալ դատական իշխանության խորհրդի անդամներ:
33. Շատ դատարանների միություններ ներգրավված են դատավորների վերապատրաստումներում կամ դրանք կազմակերպելու կամ վերապատրաստման համար

<sup>22</sup> Բելգիայում (Conseil consultatif de la magistrature), Բուլղարիայում (Partnership Council):

<sup>23</sup> Բուլղարիա (Ընկերակցական խորհուրդ):

<sup>24</sup> Ռումինիա, Իսպանիա:

<sup>25</sup> Նորվեգիա (Նշանակման խորհրդի դատավոր անդամների առաջարկություն), Սլովակիա (ցանկացած հասարակական միության առաջարկության նման):

<sup>26</sup> Ադերբայջան (երկու թեկնածություն յուրաքանչյուր յոթ դատավոր անդամների տեղերի համար):

<sup>27</sup> Նիդերլանդներ:

<sup>28</sup> Հյուսիսային Մակեդոնիա (նախագահ ու մեկ անդամ և տեղակալներ):

նյութեր մշակելու և առարկաներն ինքնուրույն<sup>29</sup> մշակելու, փորձառու մասնագետների տրամադրելու կամ առնվազն դասընթացների կազմակերպման հետ կապված խորհուրդներ տալու միջոցով: ԵԴԽԽ-ն իր թիվ 4 (2003) կարծիքում, որը կապված է ներպետական և եվրոպական մակարդակով դատավորների պատշաճ նախնական և ընթացակարգային վերապատրաստումների հետ, նշում է, որ դատական իշխանությունը պետք է գլխավոր դեր խաղա կամ ինքը լինի վերապատրաստման դասընթացների կազմակերպման պատասխանատուն, և որ վերապատրաստումը չպետք է իրականացնեն գործադիր կամ օրենսդիր<sup>30</sup> մարմինները:

34. Մասնագիտական վարքագծի էթիկական սկզբունքները պետք է մշակվեն հենց դատավորների կողմից<sup>31</sup>: Այն փաստը, որ դատավորներն ազատ համագործակցում են, և որ գոյություն ունի փոխանակման հարթակ, երաշխիք է առ այն, որ դատավորներն առավելագույնս հետևեն դատավորների միությունների կողմից մշակված ցանկացած սկզբունքի կամ մշակված նման սկզբունքներ այն դեպքում, երբ դատավորների միություններն<sup>32</sup> առնվազն ակտիվորեն ներգրավված լինեն<sup>33</sup>:
35. Նույն պատճառներով դատավորների միությունները կարևոր դեր ունեն համապատասխան մարմին ստեղծելիս, որը խորհուրդ է տալիս դատավորներին, որոնք առճակատվում են մասնագիտական էթիկայի հետ կապված խնդիրների կամ ոչ դատական գործունեության և իրենց կարգավիճակի համատեղելիության խնդիրների հետ<sup>34</sup>:
36. Որոշ անդամ-պետություններում դատավորների միությունները ներկայացնում են դատավորներին կարգապահական վարույթներում, եթե նրանք դիմում են ներկայացուցչության հարցով: Չի կարող լինել որևէ առարկություն՝ կապված կարգապահ-

<sup>29</sup> Ավստրիա, Ադերբայջան, Բելգիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Խորվաթիա, Գերմանիա, Հունաստան, Լիտվա, Մոնտենեգրո, Հյուսիսային Մակեդոնիա, Լեհաստան, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սլովենիա, Իսպանիա, Շվեյցարիա, Ուկրաինա, Միացյալ Թագավորություն:

<sup>30</sup> ԵԴԽԽ կարծիք թիվ 4 (2003)՝ կապված ներպետական և եվրոպական մակարդակով դատավորների սկզբնական ու ընթացակարգային վերապատրաստումների հետ, կետ 16, տես նաև Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիան, կետ 2.3:

<sup>31</sup> ԵԴԽԽ կարծիք թիվ 3(2002)՝ կապված դատավորների մասնագիտական վարքագծի, մասնավորապես՝ էթիկայի, անհամատեղելի վարքի և անկողմնակալության մասին սկզբունքների և կանոնների հետ, կետ 48 lit ii և 49 lit iii, տես նաև Առաջարկություն (2010)12, կետ 73:

<sup>32</sup> Ավստրիայում, Բուլղարիայում, Խորվաթիայում, Դանիայում, Ֆինլանդիայում, Իսլանդիայում, Իտալիայում, Մալթայում, Նիդերլանդներում, Նորվեգիայում, Սլովենիայում, Իսպանիայում, Շվեյցարիայում գործում են դատավորների միությունների կողմից մշակված էթիկայի կանոններ:

<sup>33</sup> Էթիկայի չափանիշներ սահմանելու գործում դատավորների միությունների ներգրավման այլ երկրներ. Ադերբայջան, Բելգիա, Էսթոնիա, Գերմանիա, Իրլանդիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մոնտենեգրո, Հյուսիսային Մաքեդոնիա, Ռումանիա, Սլովակիա, Շվեդիա, Թուրքիա, Ուկրաինա, Միացյալ Թագավորություն:

<sup>34</sup> ԵԴԽԽ թիվ 3 կարծիք (2002)՝ կապված դատավորների մասնագիտական վարքագծի, մասնավորապես՝ էթիկայի, անհամատեղելի վարքի և անկողմնակալության մասին սկզբունքների և կանոնների հետ, կետ 49, lit iv և Առաջարկություն (2010)12, կետ 74:

հական վարույթներում դատավորների միությունների կողմից իրենց անդամներին ներկայացնելու և արդար վարույթ երաշխավորելու հետ, հատկապես եթե նման վարույթների ընթացքում տեղի են ունենում չարաշահումներ որոշ դատավորների հանելու նպատակով: Սակայն պետք է ուշադիր լինել, որպեսզի չստեղծվի պատկերացում, թե դատավորների միությունները սխալ վարքագիծ դրսևորող դատավորների պաշտպաններն են: Դատավորների և դատական իշխանության հավաստի հաշվետվությանը նպաստելը և դատավորների միության կարևորագույն խնդիրներից է:

**Բ. Իշխանության մյուս թևերի հետ հարաբերություններում**

- 37. ԵԴԽԽ-ն գտնում է, որ դատավորների միությունները պետք է խուսափեն քաղաքական ուժերի կամ քաղաքական ուժերի թեկնածուների շահերի հետ կապված կողմնորոշումներից և նրանք չպետք է ներգրավված լինեն որևէ քաղաքական հարցերի մեջ, որոնք դուրս են իրենց բուն նպատակների շրջանակներից:
- 38. Դատավորների միությունները ներկայացնում են դատավորների փորձն ու կարծիքը և կարիք ունեն այնպիսի ուղիների, որոնք թույլ կտան ներկայացնել իրենց դիրքորոշումներն ու առաջարկությունները իշխանության մյուս թևերի շրջանակում: ԵԴԽԽ-ն համամիտ է դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիայի 1.8-րդ հոդվածի առթիվ բացատրական հուշագրում գետեղված դիտարկումների հետ առ այն, որ «դատավորները պետք է ունենան դիրքորոշում դատական իշխանության ընդհանուր բյուջեի և առանձին դատարանների համար նախատեսվող աղբյուրների մշակման և սահմանման հարցում, որը ենթադրում է ներպետական կամ մասնավոր մակարդակներում խորհրդատվության կամ ներկայացուցչության իրականացում: Դա նաև առավել ընդլայնում է արդարադատության արդյունավետ իրականացման հնարավորությունները», ինչպես նաև առ այն, որ «իրականացվող խորհրդատվությունները դատավորներին նրանց ներկայացուցիչների կամ մասնագիտական միությունների կողմից նրանց կարգավիճակին առաջադրվող փոփոխությունների կամ նրանց պարզևատրությունների հետ կապված հիմքերի փոփոխությունների կամ նրանց սոցիալական կարգավիճակի առթիվ, ներառյալ՝ նրանց թոշակի չափը, պետք է ապահովի, որ դատավորներն անմասն չմնան այս ոլորտներում որոշումներ կայացնելու գործընթացներից»:
- 39. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն որոշել է, որ «լիակատար ժողովրդավարությունը, որը հիմնված է հանրային իշխանության իրավասությունների և պարտականությունների իրականացման գործընթացը որոշելու կամ դրան նպաստելու իրավունքի վրա, նպաստում է ներկայացուցչական ժողովրդավարությանը, իսկ քաղաքական որոշումների կայացնելու գործընթացին քաղաքացիական մաս-

նակցությունը<sup>35</sup> պետք է վերահսկվի որոշակի անձանց, ոչ պետական կազմակերպությունների (ՀԿ), իսկ ընդհանուր առմամբ՝ քաղաքացիական հասարակության կողմից: Կապված ոչ-պետական կազմակերպությունների հետ՝ Նախարարների կոմիտեն հաստատում է «ոչ-պետական կազմակերպությունների (ՀԿ) էական ներդրումը ժողովրդավարության և մարդու իրավունքների զարգացման և իրականացման գործում, մասնավորապես՝ հասարակական տեղեկացվածության, հասարակական կյանքին ունեցած մասնակցության, պետական մարմինների թափանցիկության և հաշվետվության նկատմամբ հսկողության միջոցով»:<sup>36</sup> ՀԿ-ները պետք է ստանան խորհրդատվություն օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի նախագծեր մշակելիս, որոնք առնչվում են նրանց կարգավիճակին, ֆինանսավորմանը կամ գործարքների ոլորտներին<sup>37</sup>:

40. ԵԴԽԽ-ն համոզված է, որ մասնակցության այս հնարավորությունները պետք է վստահվեն նաև դատավորների միություններին, չնայած որ դրանք քաղաքացիական հասարակություն ներկայացնող կազմակերպություններ չեն, այլ կազմակերպություններ են, որոնց անդամները երրորդ իշխանության կրողներ են: Ժամանակակից ժողովրդավարությունում դատական իշխանության դիրքի և իշխանության մյուս թևերի հետ դրա հարաբերությունների վերաբերյալ իր թիվ 18 (2015) կարծիքում ԵԴԽԽ-ն ներկայացնում է ուղեցույց, ինչպես նաև իշխանության մյուս թևերի հետ դիսկուսիա<sup>38</sup>, երկխոսություն հասարակության հետ<sup>39</sup>: Այնտեղ ակնարկ կա նաև իշխանության երեք թևերի<sup>40</sup> միջև հարաբերությունների սահմանափակման անհրաժեշտության վերաբերյալ: Նույն կերպ կարծիքը կարող է կիրառվել որպես ուղեցույցի տեսակ՝ մի կողմից կապված դատավորների միությունների միջև, մյուս կողմից՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև հարաբերությունների հետ:
41. ԵԴԽԽ-ն ողջունում է դատավորների միությունների մասնակցությունն օրենսդրական գործընթացներին գործադիր մարմնի կողմից արդարադատության ոլորտին վերաբերող օրինագծերի մշակման գործում: Երբ ձևավորվում են բարեփոխումների հանձնաժողովներ կամ նման ռազմավարական ծրագրերի իրականացման աշխատանքային խմբեր, պետք է ներգրավվեն միության կողմից նշանակված դատավորների միությունների ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ գործադիր

<sup>35</sup> Քաղաքական որոշումներ կայացնելու գործընթացում ներգրավվածության մասին ուղեցույցեր, CM (2017) 83, նախաբան:

<sup>36</sup> Առաջարկություն CM/Rec(2007)14՝ Եվրոպայում ոչ պետական կազմակերպությունների իրավական կարգավիճակի մասին, նախաբան, կետ 2:

<sup>37</sup> Ibid., կետ 77:

<sup>38</sup> Ibid., կետ 33:

<sup>39</sup> ԵԴԽԽ կարծիք թիվ 18(2015)՝ կապված ժամանակակից հասարակությունում դատական համակարգի դիրքի և իշխանության մյուս թևերի հետ դրա հարաբերությունների հետ, կետ 32:

<sup>40</sup> Ibid., կետ 40 և 53-55 կետեր:

մարմինը պետք է դիմի ստանալու դատավորների միությունների կարծիքը բոլոր փուլերում՝ կապված դատաիրավական բարեփոխումների և նախագծերի հետ՝ ներառյալ բյուջետային հարցերի և միջոցների բաշխման, աշխատանքային պայմանների և դատավորների կարգավիճակի հետ կապված բոլոր հարցերի վերաբերյալ:

42. Որոշ անդամ-պետություններում դատավորների միությունների ձևական մասնակցությունն օրինագծերի մշակման և փոփոխությունների մշակման գործընթացում իրականացվում է օրենքով կամ ենթաօրենսդրական ակտով նախատեսված ձևական կարգավորմամբ<sup>41</sup>: Որոշ այլ անդամ-պետություններում այն արդեն կայացած պրակտիկա է<sup>42</sup>: ԵԴԽԽ-ն ողջունում է այնպիսի պրակտիկան, որը հնարավորություն է տալիս դատավորների միություններին որոշումներ կայացնել և մեկնաբանություններ անել համատասխան օրենսդրության առթիվ՝ կապված այն հարցերի հետ, որոնք առնչվում են դատավորների կարգավիճակին և դատարանների ղեկավարմանը, որոնց համար պետք է տրամադրվի պատշաճ ժամանակ, և որի արդյունքները պետք է լրջագույնս հաշվի առնվեն: Միևնույն ժամանակ դատավորների միությունները պետք է զերծ մնան քաղաքական հակասական խնդիրներից, որոնք դուրս են մնում իրենց նպատակների շրջանակից:
43. ԵԴԽԽ-ն դատավորների միությունների կարևորագույն խնդիր է համարում արդարադատության համակարգի բարելավման և օրենքի գերակայության ամրապնդման հարցում պատասխանատվության առկայությունը:

**9. Ընդհանուր առմամբ հասարակության հետ հարաբերությունը**

44. Դատավորների միությունները հատկապես կարևոր դերակատարություն ունեն հանրությանը և լրատվական միջոցներին դատական իշխանության աշխատանքի և նախաձեռնությունների մասին տեղյակ պահելու գործում, ներառյալ՝ դատավորների իրավասությունների և պարտականությունների, ինչպես նաև դատական իշխանության և իշխանության մյուս թևերի դերի վերաբերյալ օրենքի գերակայությամբ ստեղծված ժողովրդական երկրում:
45. ԵԴԽԽ գոհունակությամբ նկատում է, որ շատ դատավորների միություններ ունեն էական և արդյունավետ ներդրում, որոնց նպատակն է ամրապնդել հարաբերությունները և փոխըմբռնումը դատական իշխանության և հասարակության միջև, օրինակ՝ կրթական ծրագրերի, տեղեկատվական նյութերի, դոնբաց դատական միջոցառումների, հանրային բանավեճերի, ներկայացումների, այլ տեղեկատվա-

<sup>41</sup> Ավստրիա (կապված ստորական դատարանների հետ), Էստոնիա, Գերմանի, Հունաստան, Իսլանդիա, Մոնտենեգրո, Նիդերլանդներ, Ռումինիա, Սլովակիա:

<sup>42</sup> Ֆինլանդիա, Իտալիա, Լեհաստան, Շվեյցարիա:

կան ծրագրերի իրականացման միջոցով և այլն<sup>43</sup>: Նման միջոցներն առավել արդյունավետ են, եթե դրանք իրականացվում են համակարգում աշխատողների կողմից, ուստի դատավորների միությունները պետք է ներգրավված լինեն այդ գործընթացներում: Կարծես թե ավելի հաճախ դատավորների միությունները կազմակերպում են սեմինարներ, կիրառում են ակտիվ լրատվական քաղաքականություն և ներգրավում են սոցիալական լրատվամիջոցներին իրենց աշխատանքում՝ քայլեր, որոնք ողջունում է ԵԴԽԽ-ն:

46. Երբեմն դատավորների միություններն աշխատում են ՀԿ-ների հետ որոշակի նպատակներ իրականացնելիս: Դա կարող է բարելավել այսպես կոչված համատեղ նպատակների իրականացման գործընթացը, պայմանով, որ բացառվի որևէ քաղաքականացում:

**VI. Ինչ է պահանջվում դատավորների միություններին իրենց նպատակներն իրականացնելու համար**

**Ա. Ընդհանուր ուղեցույցեր**

47. 2014 թվականին Վենետիկի հանձնաժողովը և Ժողովրդական ինստիտուտների ու մարդու իրավունքների ԵԱՀԿ գրասենյակը (OSCE/ODIHR) ընդունել են համատեղ ուղեցույցներ միավորման ազատության վերաբերյալ<sup>44</sup> (այսուհետ՝ Միավորման ազատության ուղեցույց), որն առնչվում է միություններ ստեղծելու և դրանց միանալու հիմնարար իրավունքին: ԵԴԽԽ-ն համամիտ է այս ուղեցույցների հետ: Այդ փաստաթղթում զետեղված չափանիշների մեծ մասը կարող է կիրառվել նաև դատավորների միությունների նկատմամբ:

48. Մասնավորապես, ԵԴԽԽ-ն հիշեցնում է հետևյալ չափանիշները.

ա. Բոլորը հավասարապես ունեն միավորվելու իրավունք<sup>45</sup>:

բ. Ստեղծումն ու գրանցումը (անհրաժեշտության դեպքում) չպետք է անհիմն բարդացվի կամ խոչընդոտվի<sup>46</sup>:

<sup>43</sup> ԵԴԽԽ Կարծիք թիվ 7(2005)՝ արդարադատության և հասարակության մասին, բաժին Ա. Դատարանի և հասարակության միջև հարաբերությունները, կետ 10-20, և ԵԴԽԽ կարծիք թիվ 6(2004)՝ կապված խելամիտ ժամկետում դատական քննության և դատական քննությունում դատավորների դերի մասին՝ հաշվի առնելով վիճելի հարցերում այլընտրանքային միջոցների հետ, բաժին A. Արդարադատության մատչելիություն, կետ 11-18:

<sup>44</sup> Վենետիկյան հանձնաժողով և OSCE/ODIHR համատեղ ուղեցույցերը միավորման ազատության մասին, VC CDL-AD (2014)046, resp. OSCE/ODIHR Legis NR. GDL-FOASS/163/2014

<sup>45</sup> Ibid., կետ 122 ff:

<sup>46</sup> Ibid., կետ 151:

- գ. Ինքնակառավարման սկզբունքը պետք է հարգվի և թույլատրվի<sup>47</sup>, որն այլ հարցերի շարքում նշանակում է, որ պետք է արգելվի ցանկացած արտաքին ազդեցություն նպատակների, ներքին կառուցվածքի<sup>48</sup> և դատավորների միության աշխատակիցների ընտրության<sup>49</sup> հարցում:
- դ. Պետք է տրամադրվի հնարավորություն ներգրավվելու թափանցիկ իրավաստեղծ գործընթացին ու երկխոսությանը<sup>50</sup> և մեկնաբանություններ ներկայացնելու միջազգային մասնակիցներին անհրաժեշտ հաշվետվությունների առթիվ:<sup>51</sup>
- ե. Գործունեության դադարեցումը կամ կասեցումը պետք է հնարավոր լինի միայն շատ բացառիկ, սահմանափակ դեպքերում<sup>52</sup> և պետք է վերահսկվի անկախ ատյանի կողմից:<sup>53</sup>
- զ. Պետք է թույլատրվի նոր տեխնոլոգիաների կիրառումը, քանի որ դա բոլորի համար է. պետք է արգելեն վերահսկման այն միջոցների կիրառումը, որոնք հատկապես նպատակ են հետապնդում դիտարկել միությունները և արգելափակել կայքերը<sup>54</sup>:

**Բ. Դատավորների հատուկ դիրքը**

- 49. Դատավորների միությունների առնչությամբ անհրաժեշտ է հաշվի առնել որոշ հատկանիշներ՝ կապված դատավորների հատուկ դիրքի և նրանց առաջ ծառայած խնդիրների հետ: Դատավորները պետք է լինեն անկախ և անկողմնակալ: Նրանք ոչ միայն պետք է լինեն անկախ և անկողմնակալ, այլ նաև պետք է համարվեն այդպիսին: Դատավորները ձևավորում են դատական համակարգը, որն իշխանության թևերից մեկն է, սակայն այն իշխանության թևն է, որը կրում են դատավորները կամ նրանց կոլեգիաները:
- 50. Որպես իշխանության առանձին ճյուղ՝ դատական իշխանությանը, ի տարբերություն քաղաքական կուսակցությունների և հիերարխիայի կրող հանդիսացող գործադիր կամ օրենսդիր թևերի, հեշտ չէ ներկայացնել ընդհանուր ցանկություն և շփվել ընդհանուր ուղիով իշխանության այլ թևերի, զանգվածային լրատվության միջոցների և ընդհանուր առմամբ՝ հասարակության հետ:

---

<sup>47</sup> Ibid., կետեր 169 և 171:  
<sup>48</sup> Ibid., կետ 175:  
<sup>49</sup> Ibid., կետ 174:  
<sup>50</sup> Ibid., կետ 183 և 184:  
<sup>51</sup> Ibid., կետ 186:  
<sup>52</sup> Ibid, կետեր 244, 245, 251 256:  
<sup>53</sup> Ibid., կետեր 144, 156:  
<sup>54</sup> Ibid կետեր 256, 270, 271:

51. Դատավորներն ունեն նաև արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքը<sup>55</sup> չնայած որ անհատ դատավորները սահմանափակված են իրենց գործերի և այլ տեղեկությունների հետ կապված կոնֆիդենցիալության որոշակի կանոններով, երբ առիթ են ունենում հայտարարություններ անելու և հայտնելու իրենց կարծիքը:
52. Մեկ դատավորի կողմից արվող հայտարարությունն, անշուշտ, ունի սահմանափակ ազդեցություն: Դատավորների միությունները կարող են նպաստել այս անխուսափելի թերությունների վերացմանը երկու ճանապարհով: Նրանք կարող են օգնել գտել ընդհանուր դիրքորոշում և նրանք կարող են արդյունավետ ներկայացնել այս դիրքորոշումը դրսում:
53. Եթե դատական համակարգի ներսում առկա են մեկից ավել դատավորների միություններ, դրանք երբեմն կարող են ունենալ տարբեր դիրքորոշումներ որոշակի ընդհանուր խնդիրների առթիվ: Թեև պլյուրալիզմը հարստացնում է ժողովրդական երկխոսությունն արդարադատության համակարգում, ԵԴԽԽ-ն ողջունում է ընդհանուր դիրքորոշման ձևավորումը՝ կապված կարևոր խնդիրների հետ, որի արդյունքում հնարավոր է ունենալ ծանրակշիռ ազդեցություն արդարադատության համակարգի ներսում և դրանից դուրս:
54. ԵԴԽԽ-ն գնահատում է դատավորների միությունների կարևորությունը: Դրանք ունեն ներուժ էական ներդրում ունենալու անդամ-պետություններում օրենքի գերակայության հարցում, նույնիսկ եթե դատավորներից բաղկացած միությունների վերը նշված հատկանիշները հանգեցնում են հատուկ սահմանափակումների:
55. ԵԴԽԽ-ն համոզված է, որ դատավորների միությանը ներկայացվող անկախ և ինքնակառավարվող լինելու պահանջն էական տարր է, որը մի կողմից միություններ ձևավորելու և դրաց միանալու հիմնարար իրավունքի հատկանիշ է, սակայն մյուս կողմից նաև սերտորեն կապված է դատավորների և դատական համակարգի անկախության և իշխանությունների տարանջատման և հավասարակշռության սկզբունքի հետ: Չնայած՝ դատավորների միությունները պրակտիկորեն այս սահմանադրական իրավունքների կրողները չեն, դատավորների և դատական իշխանության վրա անուղղակի կերպով կարող են կիրառվել ճնշումներ և ունենալ ազդեցություն, եթե այդպիսիք լինեն դատավորների միությունների վրա:
56. Այդ պատճառով անչափ կարևոր է, որպեսզի դատավորների միությունների նպատակները, կառուցվածքը, անդամակցությունը և աշխատակիցների ընտրությունը զերծ լինեն արտաքին ազդեցությունից և վերահսկողությունից:
57. Միությանն անդամակցելը չպետք է ունենա որևէ ազդեցություն դատավորների առաջխաղացման վրա և չպետք է առաջացնի ոչ առավելություններ, ոչ էլ թերու-

<sup>55</sup> ՄԻԵԴ վճիռները Բական ընդդեմ Հունգարիայի գործով, 2016 թվականի հունիսի 23; Հարաբին ընդդեմ Սլովակիայի, 2012 թվականի նոյեմբերի 20; տես նաև՝ ՄԻԵԿ 11-րդ հոդվածը:



թյուններ: Անդամները չպետք է պարտավոր լինեն բացահայտելու իրենց անդամակցությունը<sup>56</sup>՝ այդպիսով ենթարկվելով ազդեցության՝ կապված նման անձնական տվյալների վերաբերյալ անձնական կյանքի անձեռնմխելիության հետ: Քանի որ դատավորների միություններն այս առումով պաշտպանում են նրանց շահերը, անդամակցության վերաբերյալ տվյալները պետք է պահպանվեն առևտրային միավորումների նման, որոնց դեպքում տվյալների բացահայտումն արգելված է<sup>57</sup>: Նույնիսկ եթե համապատասխան կարգավորումները պահանջում են, որպեսզի դատավորները լրացնեն իրենց եկամուտների մասին հայտարարագրեր, որի նպատակն է ապահովել հնարավոր շահերի բախումների թափանցիկություն, այն չի կարող ներառել դատավորների միություններին անդամակցելու մասին տեղեկության, ինչպես նաև դատավարական գործառույթների մասին տեղեկության բացահայտում:

#### Գ. Ռեսուրսներ և ղեկավարում

58. Կախված նպատակների տեսակներից և դրանք իրականացնելու կանխատեսելի միջոցներից՝ դատավորների միություններն ունեն տարբեր աստիճանի ռեսուրսների կարիք: Անդամակցության վճարները շատ միությունների եկամտի հիմնական աղբյուրն են: Այս վճարները չպետք է լինեն խտրական կամ չափազանց բարձր, որի պատճառով որոշ դատավորներ չկարողանան վճարել այդ գումարները, զրկվեն միությանն անդամակցելու հնարավորությունից:
59. Հաճախ կարող է լրացուցիչ ֆինանսավորման կամ այլ գույքի անհրաժեշտություն առաջանալ: ԵԴԽԽ-ն Միավորումների ազատության մասին ուղեցույցում հաստատում է պահանջն առ այն, որ «միությունները պետք է ունենան իրավունք փնտրելու, ստանալու և կիրառելու ինչպես ներպետական, այնպես էլ օտարերկրյա կամ միջազգային ֆինանսական միջոցներ, նյութեր և մարդկային ռեսուրսներ իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար»<sup>58</sup> Ֆինանսավորման հնարավորության դեպքում այն պետք է լինի թափանցիկ և չպետք է խոչընդոտի դատավորների միությունների անկախությանը կամ ստեղծի այդպիսի խոչընդոտման տպավորություն»:

<sup>56</sup> Տես՝ ԵԴԽԽ բյուրոյի Կարծիքը 11.08.2017 թվականի փոփոխությունների վերաբերյալ՝ կապված Բուլղարիայի դատական համակարգի մասին 02.11.2017 թվականի (CCJE-BU(2017)10) օրենքի հետ, կետեր 10-16:

<sup>57</sup> Ibid., կետ 13 և ILO-ի ղեկավար մարմնի Միավորման ազատության հանձնաժողովի մասին որոշումների և սկզբունքների հավաքածուի (ILO) Միջազգային աշխատանքային կազմակերպությունը, հինգերորդ հրատարակում, 2006, կետ 866:

<sup>58</sup> Միավորման ազատության վերաբերյալ համատեղ ձեռնարկներ, կետ 32

60. Շատ միություններ ստանում են որոշակի եկամուտ հրապարակումներից, դասընթացներից, սեմինարների, կոնֆերանսների և այլ միջոցառումների կազմակերպումից կամ տեղական կամ միջազգային ծրագրերին մասնակցությունից: Մյուսները շահույթ են ստանում իրենց գույքից, հանգանակություններից, ժառանգությունից և սուբսիդիաներից: Եթե կիրառվում են եկամտի նման լրացուցիչ աղբյուրներ, շատ ուշադիր պետք է լինել, որպեսզի չտոնահարվի միության անկախությունը, և որպեսզի առաջ չգա նույնիսկ ազդեցության տապալրություն միության գործունեության նկատմամբ: Դա պետք է հաշվի առնվի, եթե աջակցությունը տրամադրվում է պետական բյուջեից և հիմնված է որոշ պայմանների վրա: Պետական բյուջեից պետական միջոցներ օգտագործելը, որպես կանոն, հանգեցնում է որոշակի ֆինանսական վերահսկողության: Այդ պատճառով, զգուշությամբ պետք է մոտենալ ոչ միայն նման ֆինանսավորումից կախվածություն ունենալու, այլ նաև կիրառված վերահսկողության նկատմամբ, որը երբեք չի կարող ներառել վերահսկողություն գործունեության բովանդակության նկատմամբ:
61. Դատավորների միության ֆինանսավորումը չպետք է վտանգի դրանց շահույթ չհետապնդող բնույթը, ինչը նշանակում է, որ եկամուտ ստանալը չպետք է լինի նրանց առաջնային նպատակը: Միությունը չպետք է բաշխի իր անդամներին իր գործունեությունից բխող եկամուտներ, սակայն պետք է ներդնի ֆինանսական միջոցներն իր նպատակների իրականացման գործընթացում<sup>59</sup>: Դատավորների միությունները պետք է ունենան խիստ թափանցիկ կանոններ՝ կապված իրենց ֆինանսավորման հետ:

## Դ. Ներքին կառուցվածք

62. Դատավորների միությունները կոչված են գործել իրենց անդամների անունից և առաջնորդվել ընդհանուր շահերով: Դա պահանջում է, որպեսզի միության ներսում լինի ժողովրդավարական կառուցվածք, որպեսզի որոշումները կայացվեն և գործընթացներն ընթանան թափանցիկ կերպով: Դա հատկապես կարևոր է, եթե միություններն իրենց բարձր ներկայացուցչական բնույթի շնորհիվ նպատակ հետապնդեն հանդես գալու բոլոր դատավորների կամ որոշակի իրավասության դատարանների դատավորների անունից:
63. Այս նպատակներն իրականացնելու նպատակով ԵԴԽԽ-ն առաջարկում է, որպեսզի միության աշխատակիցները (նախագահը, գործադիր խորհուրդը և այլն) ընտրվեն ժողովրդավարական, ոչ խտրական ճանապարհով իրենց անդամների կամ իրենց անդամների կողմից ընտրված ներկայացուցիչների կողմից: Խորհրդի կամ այլ գործադիր մարմինների որոշումները պետք է լինեն թափանցիկ և պատ-

<sup>59</sup> Ibid., կետ 43:

ճառաբանված: Պետք է իրականացվի բաց երկխոսություն անդամների և աշխատակիցների միջև, որպեսզի միության շրջանակներում յուրաքանչյուր խմբի տրվի արդարացի հնարավորություն լինելու լսված, առանց որևէ խտրականության:

**Ե. Հարաբերությունները քաղաքական ուժերի հետ**

- 64. Դատավորների միությունները և դրանց աշխատակիցները չպետք է լինեն քաղաքական ուժերի ներկայացուցիչներ կամ համակրեն որևէ քաղաքական ուժի: Քաղաքական ուժերի կամ խմբերի փորձերն ազդելու միությունների քաղաքականության կամ դրա մարմինների ընտրությունների վրա պետք է ընդհանրապես բացառել: Միության ներկայացուցիչները պետք է դիտարկվեն ոչ թե որպես քաղաքական խմբերի ներկայացուցիչներ, այլ՝ որպես ներկայացուցիչներ, որոնց միակ նպատակն է ծառայել արդարադատության համակարգի պահանջներին: Դա չի նշանակում, որ դատավորների միությունները չեն շփվում քաղաքական ուժերի հետ: Արդարադատության համակարգի կարիքների և անհրաժեշտ բարեփոխումների, օրենքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության մասին բարձրաձայնելու և դրանց համար պայքարելու նպատակով դատավորների միությունները կարող են ներգրավվել երկխոսության մեջ քաղաքական ուժերի հետ, քանի որ դրանք պատասխանատու են ժողովրդավարության և օրենքի գերակայության համար:
- 65. ԵԴԽԽ-ն չի ընդունում այն համակարգերը, որոնցում հովանավորվում են տարբեր քաղաքական կուսակցությունների կողմից նշանակված կամ աջակցվող միության տարբեր անդամների խմբեր, հատկապես՝ միության աշխատակիցների ընտրությունների նախընտրական գործընթացների ընթացքում:

**Զ. Դատավորների միությունները և առևտրային միությունները**

- 66. Դատավորների աշխատանքային պայմանները, նրանց վարձատրությունը, թոշակը և անվտանգությունը պետք է երաշխավորվեն պետության կողմից: Դրա համար դատավորներն ունեն իրենց պահանջմունքները պաշտպանելու և բարելավելու իրենց անձնական դրությունը, ինչպես այլ անձինք, և այդ իմաստով դատավորների միություններն ունեն այն նույն շահերը, ինչ առևտրային միությունները:
- 67. Դատավորները նաև կարող են ստեղծել առևտրային միություններ և միանալ առևտրային միությունների:<sup>60</sup> Օրենսդրությամբ կարող են նախատեսվել որոշ սահմանափակումներ այս իրավունքների նկատմամբ՝ կապված դատավորների

<sup>60</sup> Դատավորների վարքագծի մասին Բանգալորյան սկզբունքների մասին մեկնաբանություններ, կետ 176:

հետ, սակայն այս սահմանափակումները չպետք է լիովին զրկեն դատավորներին այս հիմնարար իրավունքներից<sup>61</sup>:

- 68. Անդամ-պետություններում առևտրային միություններին դատավորների անդամակցության պրակտիկան բավականաչափ տարբեր է: Որոշ անդամ-պետություններում իրավական և մշակութային ավանդույթն անհամատեղելի է համարում նման անդամակցությունը դատավորի դիրքի և դերի հետ: Այլ անդամ-պետություններում որոշ դատավորներ միաժամանակ և՛ նման միությունների, և՛ դատավորների միությունների անդամներ են: Եվ կան որոշ դատավորների միություններ, որոնք համարվում առևտրային միություններ կամ իրենք իրենց այդպիսին են համարում<sup>62</sup>: Երբեմն, որպես առևտրային միության կարգավիճակը վերջիններիս տալիս են լրացուցիչ միջոցներ:
- 69. Այս տարբեր ավանդույթները պետք է հարգել: Այդուհանդերձ, ԵԴԽԽ-ն պետք է ընդգծի, որ պետք է ուշադիր լինել, որպեսզի եթե առևտրային միություններում հիմնականում կուսակցական քաղաքական գործիչներ են, ապա նման քաղաքականացումը չի ազդի դատավորների և նրանց համբավի վրա: Այլապես նման պրակտիկան կարող է հանգեցնել կանխակալության և կողմնակալության վերաբերյալ հայտարարությունների:

**VII. Դատավորների միջազգային միության կարգավիճակը, նպատակները և դերը:**

- 70. Վերջին տարիներին Եվրոպան շատ արագ զարգացրել է ընդհանուր իրավական տիրույթը: Մի կողմից ավելի ու ավելի շատ գործիքներ են ստեղծվել ներպետական դատական համակարգերի միջև միջազգային համագործակցության համար, իսկ մյուս կողմից, ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի իրավասության հովանու ներքո Եվրոպական ընդհանուր հիմնարար արժեքներն ուղղակիորեն ազդել են ներպետական իրավական համակարգերի և դրանց կիրառման վրա: Միաժամանակ իրավասության ու չափանիշների սահմանման և ընդհանուր կարգավորումների ի կատար ածման զարգացումը մասնակիորեն դրվել է կողմերի վրա Եվրոպական մակարդակով: Այս նոր Եվրոպական ինսիտուացիաներն ձևավորվել և զարգացել են օրենսդիր ու գործադիր իշխանության ներկայացուցիչների ազդեցության ճանապարհով:
- 21. Վերը նկարագրված զարգացումներն ուղեկցվում են ներպետական դատական իշխանության ներկայացուցիչների քայլերով՝ ներգրավվելու նպատակով նաև Եվրոպական մակարդակով: Հիմնադրվել են մի շարք Եվրոպական դատավորների

<sup>61</sup> Տես «Մաթելին ընդդեմ Ֆրանսիայի» ՄԻԵԴ որոշումը:  
<sup>62</sup> Ֆինլանդիա, Ֆրանսիա, Հունաստան, Լյուքսեմբուրգ (միությունը հանրային ծարայողների միության չգրանցված ենթաբաժին է), Նիդերլանդներ:

միություններ, որոնցից որոշներն իրենցից ներկայացնում են ներպետական միությունների ֆեդերացիաներ, մինչդեռ մյուսներում անդամներ են տարբեր երկրների դատավորներ, իսկ մյուսներն էլ կրկին տրամադրում են անդամակցություն ինչպես ներպետական միություններին, այնպես էլ՝ անհատ անդամների:

72. Իրենց անդամների համար նման միությունները տրամադրում են կարևոր հնարավորություն փոխանակելու տարբեր իրավական համակարգերի և ընդհանուր չափանիշների և արժեքների մեկնաբանման փորձը:
73. Ներպետական դատավորների միությունների նման եվրոպական դատավորների միությունները նպատակ են հետապնդում պաշտպանելու և ամրապնդելու դատավորների և դատական համակարգի անկախությունը և երաշխավորելու ու զարգացնելու օրենքի գերակայությունը:
74. Նրանք փորձում են երկխոսություն հաստատել մասնակիցների միջև եվրոպական մակարդակով, նպաստել չափանիշների ձևավորմանն այս մակարդակում և հրավիրել եվրոպական մարմինների ուշադրությունը անդամ-պետությունների դատական համակարգերի խնդիրների վրա:
75. Եվրոպական դատավորների միություններն ուսումնասիրում են արդարադատության համակարգերն անդամ-պետություններում և դրանց համապատասխանությունը եվրոպական չափանիշներին: Դրանք փորձի մեծ մասի կարևորագույն կետն են, ինչպես նաև հանդես են գալիս որպես հարթակ ներպետական դատական համակարգերի փորձի փոխանակման համար՝ նպատակ հետապնդելով նաև զարգացնելու եվրոպական չափանիշները: Եվրոպական միությունները մեծ դեր ունեն իրենց անդամներին եվրոպական զարգացումների և նոր փորձի ու չափորոշիչների մասին տեղյակ պահելու, ինչպես նաև եվրոպական չափանիշների վերաբերյալ վերապատրաստումներ կազմակերպելու գործում:
76. Եվրոպական դատավորների միություններին անդամակցելով՝ ներպետական միություններն ունեն ավելի մեծ հնարավորություն եվրոպական մարմիններին խնդիրների մասին ահազանգելու համար, ինչպես նաև այդպիսով նրանք կարող են ամրապնդել իրենց ազդեցությունը եվրոպական միությունների վարկանիշի հարցում: Հենց անդամ-պետություններում փաստարկները երբեմն դիտարկվում են ավելի լրջորեն, եթե դրանք ներկայացվում են եվրոպական մասնակիցների կողմից:
77. ԵԴԽԽ-ն, որը դիտարկում է եվրոպական դատավորների միությունները որպես դիտորդներ, գոհ է դրանց օգտակար ներդրումներից: Այն առաջարկում է, որպեսզի այլ եվրոպական մասնակիցները հետևեն այս օրինակին, որպեսզի այս միությունները ներգրավվեն իրենց աշխատանքին:

**VIII. Ինչպես անդամ-պետությունները պետք է աշխատեն դատավորների միությունների հետ**

78. Դատավորների միությունների գլխավոր նպատակը՝ դատավորների և դատական համակարգի անկախության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների ամրապնդումն ու պաշտպանությունը, համապատասխանում է Եվրոպայի խորհրդի հիմնարար սկզբունքներին և դրա անդամ-պետությունների պարտավորություններին: Այս ընդհանուր շահը պետք է հանգեցնի դատավորների միությունների և անդամ-պետությունների ընդհանուր ջանքերի:
79. Պետությունները չպետք է միայն զերծ մնան խաղաղ միություններ ստեղծելու և միանալու իրավունքի, ինչպես նաև արտահայտվելու ազատության<sup>63</sup> անհիմն անուղղակի սահմանափակումներից, այլ նաև պետք է երաշխավորեն այս իրավունքները<sup>64</sup>:
80. Անդամ-պետությունները, այդ իսկ պատճառով, պետք է ունենան համակարգ, որը հնարավոր է դարձնում դատավորների համար ազատ օգտվելու միություններին անդամակցելու իրենց իրավունքից և ընտրելու այն դատավորների միությունները, որոնք կարող են արդյունավետ աշխատել իրենց առջև ծառայած խնդիրները լուծելու համար:
81. Դատավորների միությունները և անդամ-պետությունները պետք է ներգրավվեն բաց ու թափանցիկ երկխոսության մեջ՝ հիմնված վստահության, արդարադատության համակարգին առնչվող համապատասխան հարցերի վրա:
82. Քաղաքական գործիչները պետք է խուսափեն դատավորների և նրանց միությունների վրա ազդեցություն ունենալուց, որը նպատակ է հետապնդում աջակցելու կուսակցական քաղաքական գործիչների շահերին ինչպես սպառնալիքների, չարդարացված մեղադրանքների կամ լրատվական արշավների միջոցով, այնպես էլ՝ մասնագիտական աճ կամ առավելություններ դրանց անդամներին տրամադրելու կամ այլ միջոցներով:
83. Անդամ-պետությունները պետք է կիրառեն իրենց ազդեցությունը եվրոպական մարմինների և եվրոպական դատավորների միությունների վրա:

<sup>63</sup> Տես «Կուրեշկինան ընդդեմ Ռուսաստանի գործով» ՄԻԵԴ որոշումը (26.02.2009):

<sup>64</sup> Բացասական և դրական պարտականություններ, տես «Օլինգերն ընդդեմ Ավստրիայի գործով» ՄԻԵԴ որոշումը, կետ 35, et al<sup>65</sup> տես՝ Խաղաղ հավաքների և միավորման ազատության իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ հաշվետուի 2012 թվականի մայիսի 21-ի հաշվետվությունը, (A/HRC/20/27) 33-42

**IX. Եզրակացություններ և առաջարկություններ**

1. Դատավորների միություններն ինքնակառավարվող, ոչ առևտրային կազմակերպություններ են, որոնց անդամները կամավոր են դիմում անդամակցության:
2. ԵԴԻԽԻՆ-ն խիստ ցանկալի է համարում, որպեսզի յուրաքանչյուր արդարադատության համակարգում առկա լինի առնվազն մեկ այդպիսի միություն:
3. Անդամ-պետությունները պետք է ունենան այնպիսի համակարգ, որտեղ արդյունավետորեն կիրառվում են դատավորների միավորվելու իրավունքը և արտահայտվելու ազատությունը, իսկ նրանք պետք է խուսափեն ցանկացած գործունեությունից, որը վտանգի տակ կդնի դատավորների միությունների անկախությունը:
4. Դատավորների միությունների ամենակարևոր նպատակներ են դատավորների անկախության հաստատումն ու պաշտպանությունը՝ երաշխավորելով նրանց կարգավիճակը և ձգտելով ապահովել նրանց համար պատշաճ աշխատանքային պայմաններ, ինչպես նաև նպաստել և ամրապնդել օրենքի գերակայությանը:
5. Դատավորների միությունները նաև կարող են խաղալ կարևոր դեր դատավորների վերապատրաստումների և էթիկայի հարցում, ինչպես նաև նպաստել դատական բարեփոխումներին:
6. Իրենց դերով և աշխատանքով դատավորների միությունները կարող են էական ներդրում ունենալ դատական համակարգի գործառնության և օրենքի գերակայության հարցում: Բոլոր դեպքերում նման ներդրումը կարևոր է և արժեքավոր:
7. Ցանկալի է, որպեսզի դատավորների միությունները հնարավորություն ունենան դիտարկելու և մեկնաբանելու համապատասխան օրենսդրության ակտերն այնպիսի հարցերով, որոնք կապված են դատավորների և դատարանների վարչակազմի կարգավիճակի հետ:
8. Դատավորների վարչակազմերի և դատավորների միությունների ներկայացուցիչների միջև երկխոսությունը, որը հիմնված է թափանցիկության և նրանց համապատասխան դերերի փոխադարձ հարգանքի վրա, կնպաստի դատական համակարգի և բարեփոխումների արդյունավետությանը:
9. Դատավորների միությունները մեծ դեր ունեն զանգվածային լրատվամիջոցներին և հասարակությանը դատական իշխանության ու դատավորների դերի, գործառույթների մասին տեղեկացնելու հարցում:
10. Դատավորների միությունները պետք է խուսափեն իրենց գործողությունները քաղաքական կուսակցությունների կամ քաղաքական ուժերի թեկնածուների շահերով ուղղորդելուց, ինչպես նաև նրանք չպետք է միջամտեն քաղաքական հարցե-

րին: Նրանց գործողությունները պետք է սահմանափակվեն սուկ իրենց նպատակների տիրույթով:

11. Դատավորների միությունները պետք է ձևավորվեն ժողովրդական ճանապարհով: Ֆինանսավորումը և որոշումներ կայացնելու գործընթացները պետք է լինեն թափանցիկ՝ առնվազն անդամների համար:
12. Դատավորները չեն կարող պարտավոր լինել բացահայտելու իրենց անդամակցությունը դատավորների միությանը:
13. Դատավորների միություններն իրականացնում են միջազգային համագործակցություն և փորձի փոխանակում այլ անդամ-պետությունների միությունների հետ: Նրանք նաև համագործակցում են եվրոպական մակարդակով մի շարք եվրոպական դատական միությունների և կազմակերպությունների միջոցով:
14. Եվրոպական մակարդակով դատավորների միություններն էական դերակատարություն ունեն եվրոպական արժեքներին և եվրոպական իրավական չափանիշներին նպաստելու ու պաշտպանելու հարցում օրենքի գերակայության և մարդու իրավունքների տիրույթում: Այդ պատճառով, ներպետական և միջազգային մարմինները պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն այդ միությունների աշխատանքին:
15. ԵԴԻԽ-ն առաջարկում է, որպեսզի եվրոպական կառույցները հիմնվեն և կիրառեն եվրոպական միությունների փորձի և դիտարկումների վրա, որոնք հավաքվում են տարբեր անդամ-պետություններից և դատական համակարգերից:
16. ԵԴԻԽ-ն խրախուսում է դատավորների միությունների և եվրոպական շահագրգիռ կողմերի միջև կանոնավոր փոխհարաբերությունները: